



ԱՆԿՈՐՆՁԵԼԻ ՄԻ ՀԻԾԱՏԱԿ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐ ԱԼԵՔՍ
ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Մեպոնքերի 30-ին, Վեհափառ Հայրապետի գահակալության 22-րդ տարեդարձի առիթով, Նոր Վեհարանի շրջափակի արևմտյան մասում տեղի ունեցավ Ալեքս և Մարի Մանուկյանների նվիրատվությամբ կառուցվելիք Մայր Աթոռի հոր թանգարան-մատենադարանի շինության հիմնարկերի արարողությունը:

Արարողությանը ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող բարձրաստիճան հույ հոգևորականներ, Երուսաղեմի հալոց տեր Եղիշե սրբազան պատրիարք հոր զխաւորությամբ, ներքին թեմերի առաջնորդ սրբազանները, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և բազմաթիվ այլ հրավիրյալներ:

Հիմնարկերի օրհնությանը ներկա է լինում նաև հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկա. Ֆրեդերիկ Դոնալդ Կոզանը իր շքախմբի անդամներով:

Հիմնարկերի օրհնության արարողությունից հետո շինության առաջին քարի ներքև զետեղվում է, որպես պատմական փաստաթուղթ՝ գալիք դարերի համար, «Գիր վկայութեան», որը ստորագրում են երկու Հայրապետները, սրբազան պատրիարքը և հանդիսությանը ներկա հոգևորականներ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամները:

Մայր Աթոռի նոր թանգարանի և մատենադարանի շենքը կառուցվում է սրտաքույն բարերարությամբ մեծահարգ տիար Ալեքս Մանուկյանի՝ «ի վայելումն հայ եկեղեցու և ազգիս հայոց»:

Տիար Ալեքս Մանուկյանը սփյուռքի մեր ազգային-եկեղեցական ու հասարակական կյանքի մեջ բացառիկ տեղ է գրավում վերջին 30-ամյակում, իր եկեղեցաշեն, կրթանվեր ու բարեսիրական գործունեությամբ: Նա ցկանա նախագահն է Հ. Բ. Ը. Միության: Նա միաժամանակ անձնական բարեկամն է Ամենայն Հայոց կաթողիկոսի և հարազատ զավակը Մայր Աթոռ ու Էջմիածնի:

Մեծանուն և մեծատուն ազգային բարերար Ալեքս Մանուկյանը, միջազգային շրջանակի ու համբավի տեր անձնավորություն, մի անգամ ևս իր որդիական հարգանքն ու սերն է մատուցում Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռին՝ անկեղծ նվիրումով, եկեղեցու և ազգի խանդավառ սիրով:

Հայրենի սուրբ հողի վրա կառուցված հուշարձաններն ու կոթողներն են մանավանդ, որ կմնան հավերժ անասան, հավերժ հայկական:

Մեր ժողովուրդը դարերի ընթացքում շատ բան է կառուցել օտար հողի վրա: Բայց այսօր, դժբախտաբար, այդ կառույցներից շատերի հետքն անգամ չի մնացել, որովհետև «ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն»:

Հայոց աշխարհն այդ հիմատով էլ «սուրբ քարերի մի աշխարհ է», որտեղ լուրաքանչյուր քար ու կոթող, կամար ու խոյակ, հաճախ ավերակ, բայց լուռ վկայություններն են մեր ժողովրդի անցյալի մեծության և նրա հավերժ ապրելու ոգու:

Ծիմարար ժողովուրդ է մեր ժողովուրդը, առատաձեռն ժողովուրդ, զոհաբերել իմացող ժողովուրդ: Պրն. Ալեքս Մանուկյանը հարազատ ու պայծառ արտահայտությունն է իր ժողովրդի այդ բարոյական առաքինությունների:

«Երանելի է տալն, քան զառնուլն» (Գործք Ի 35):

Նրանք, ովքեր ոսկու, դրամի կամ նյութականի չափանիշով են դատում կյանքն ու մարդկային բոլոր հարաբերությունները, նրանք դժբախտներ են, որոնք նույնիսկ չեն կարող վայելել իրենց դիզած հարստությունը, որոնք փողի առաջ աղքատացած հոգիներ են:

Ոսկու դեզերի մոտ՝ ոսկի սիրտ, հարստության կողքին՝ առողջ միտք և մարդասիրական վերաբերմունք, հանրային-ազգային, եկեղեցական-հայրենասիրական պարտքի գիտակցություն. «մեծանալ գործովք բարութեան» (Ա. Տիմ. Զ 17):

Ահա այսպիսի ազնվական, «բարության գործերով» պերճացած, գեղեցկացած, իրապես հարուստ անձնավորություն է պրն. Ալեքս Մանուկյանը:

Ալեքս և Մարի Մանուկյանների անունով կառուցվող Մայր Աթոռի նոր շինության կապակցությամբ մասնավոր հարցազրույց ունեցանք շինության նախագծի հեղինակ, հանրապետության վաստակավոր ճարտարապետ և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամ Բաղդիկ Արզումանյանի հետ:

Ստորև մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում մեր այդ հարցազրույցի ամփոփումը.

Ա. ՀԱՐՑ.— Խնդրում եմ, հարգելի ճարտարապետ, Ձեր բացատրությունները Մայր Աթոռում կառուցվող Ալեքս և Մարի Մանուկյանների անունը կրող շենքի ճարտարապետական Ձեր մտաֆիլացման մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ Ալեքս և Մարի Մանուկյանների անունով թանգարան-մատենադարանի շենքի նախագծի պատրաստությունը ինձ համար մեծ պատիվ էր և հաճույք:

Ես աշխատել եմ հնարավորին չափով կազմել համապատասխան նախագիծ, որը պետք է բավարարի Վեհափառ Հայրապետի առաջադրանքին, այսինքն իր արտաքին տեսքով և ներքին տարածությունների լուծմամբ լինի հալ ազգային ճարտարապետության ոճով և չխանգարի Մայր Աթոռի ճարտարապետական համակառուցի ներդաշնակությանը, լրացնի և ավելի ճոխացնի այն:

Ծեփքը տեղադրված է Նոր Վեհարանի ձախ կողմում, խաղողի այգուց դեպի արևմուտք, պարսպին զուգահեռ, ազատ տարածության վրա:

Կառուցվող շենքը երկհարկանի է (նկուղային հարկով): Այն հատակագծում ունի 62,2×19,25 մ չափեր:

Գլխավոր ճակատը մշակվել է՝ առաջին հարկը կամարաշարով, և երկրորդ հարկը նեղ լուսամուտներով և խորշերով, պսակված գմբեթով և ավարտված հարավային աշտարակով: Ընկալալի այդպիսի լուծումն արտահայտում է կառույցի թանգարանային բնույթը:

Հատուկ ուշադրություն ենք դարձրել գլխավոր մուտքի տեղադրման վրա:

Բ ՀԱՐՑ.—Ի՞նչ կարող եք ասել շենքի ներքին բաժանումների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ծեփքի կամարակապ և քանդակազարդ մուտքը մեզ առաջնորդում է առաջին հարկի սրահ, որտեղից դեպի ձախ ցուցասրահ է՝ 450 քմ տարածությամբ, ուր տեղադրվելու են եկեղեցական արվեստի ցուցանմուշները: Դեպի աջ մատենադարանն է՝ տեղադրված երեք հարկաբաժիններում, 260 քմ ընդհանուր մակերեսով: Այս հարկում է գտնվում նաև ընդունարանը՝ 65 քմ տարածությամբ:

Առաջին հարկի սրահի կենտրոնից հանդիսավոր աստիճաններով բարձրանում ենք երկրորդ հարկի խաչվող կամարներով գմբեթահարկ մեծ սրահ՝ 160 քմ տարածությամբ, որտեղից նույնպես դեպի ձախ գտնվում է մի մեծ դահլիճ՝ 540 քմ տարածությամբ:

Խաչվող կամարներով սրահի պատերին նախատեսվում են հարթաքանդակներ՝ նկիրված հալ եկեղեցու և ժողովրդի պատմության կարևոր իրադարձություններին:

Ծեփքի հարավային կողմում, աշտարակի ներքին հարկերում, տեղադրված են նկարչական և արծաթագործական վերանորոգումների արհեստանոցներ: Իսկ աշտարակի սյունազարդ քաջ տարածությունը նախատեսված է որպես դիտման հարթակ, որտեղից բացվում է Արարատյան դաշտի համայնապատկերը: Ծեփքն ունի նկուղային հարկ՝ շինության ամբողջ տարածությամբ և 2,9 մ բարձրությամբ:

Առաջին հարկի բարձրությունն է 4,5 մ, երկրորդ հարկինը՝ 6,6 մ:

Ծեփքը նախատեսված է կառուցել հայկական կղմինդրագույն տուֆ քարից: Ներսում կօգտագործվեն հայկական ֆիզիտ գունավոր քարեր, մարմարներ, արդիական նյութեր և կապահովվվեն շինարարական բոլոր սարքավորումներով (ջեռուցում, օդափոխություն, էլեկտրական լուսավորություն և այլն):

Գլխավոր ճակատի աջ մասում, առաջին հարկի որմի մեջ, նախատեսված է ագուցել միակտոր քար՝ 3,2 մ բարձրությամբ և 1,3 մ լայնությամբ,

որի վրա հայկական ավանդական խաչքարի ձևի մեջ կքանդակվի շինության արձանագրությունը:

Արդեն սկսվել են շինարարական աշխատանքները:

Հարցազրույցի ավարտին «Էջմիածին» ամսագրի խմբագիրը շնորհակալություն է հայտնում պրն. ճարտարապետին՝ նրա շահեկան տեղեկությունների համար:

Կանցնեն երկու-երեք տարիներ, և Մայր Աթոռը կօժտվի ևս մի նոր կառույցով, «ի վայելումն հայ եկեղեցու և ազգիս հայրոց»՝ պատմական նվիրատվությամբ տեղ և տիկին Ալեքս և Մարի Մանուկյանների:

«Երանի՜ որ ունիցի յիշատակ ի սուրբ Էջմիածին»:

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

